ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 14 նոյեմբերի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի
Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի
Ա. Խաչատրյանի

Քննության առնելով Աննա Ղուկասյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Աննա Ղուկասյանը 2018 թվականի հոկտեմբերի 24-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 5-րդ և ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ ՀՕ 241-ն օրենքի 1-ին հոդվածի առաջին մասը ՀՀ Սահմանադրության 72-րդ, 73-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել, այնքանով որքանով այն չի համապատասխանում որոշակիության սկզբունքին»:

2. Դիմողը նշում է, որ վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 5-րդ մասը, ՀՀ կառավարության թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածի 16-րդ կետը և ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 44.1-րդ հոդվածի 3-րդ մասն

ակնհայտ է դառնում, որ նշված իրավական ակտերում առկա է հակասություն: Մասնավորապես, ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի համաձայն՝ վարչական իրավախախտում է համարվում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի նվազագույն չափերից մինչև հնգապատիկը ներառյալ (նույն ձևակերպումն առկա է նաև ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածի 16-րդ կետում), իսկ զգալի չափ է համարվում հնգապատիկից առավել մինչև քսանապատիկը ներառյալ: Այսինքն՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պահման համար քրեական պատասխանատվություն է նախատեսվում հայտնաբերված թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի հնգապատիկից առավել լինելու դեպքում: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 5-րդ մասում օրենսդիրը ձևակերպումը տվել է թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի հնգապատիկը ներառյալ՝ չնշելով «առավել» եզրույթը, ինչն էլ իր հերթին անորոշություն է առաջացրել իրավակիրառ պրակտիկայում:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթները որոշակի չեն, դրանք ընթերցողների և կիրառողների մոտ տարընթերցման խնդիր են առաջացնում՝ հայեցողական մեկնաբանության հնարավորություն ընձեռելով:

Դիմողի պնդմամբ՝ իրավական ակտերը պետք է լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ, ինչը, սակայն, նշված իրավական ակտերն իրենց բովանդակությամբ չեն ապահովում, և արդյունքում ստացվում է այնպես, որ օրենքը կիրառողի կողմից հայեցողական կարող է ընկալվել թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի հնգապատիկի և ավելիի հայտնաբերումը հանցագործություն կամ վարչական իրավախախտում դիտարկելու համար:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով, և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ դատական կազմը գտնում է, որ դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

խնդրո առարկա գործով կայացված դատական ակտերի, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 3-ի՝ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթները չեն կիրառվել նրա նկատմամբ:

Սահմանադրական դատարանը «Նորմատիվ իրավական ակտի կիրառում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությանն անդրադարձել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ, մասնավորապես, արտահայտելով իրավական դիրքորոշում առ այն, որ «...ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...» բառակապակցության մեջ «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Բողոք բերած անձը, հղում կատարելով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործող) նյութերի չափերի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 1-5-րդ հավելվածներն ուժը կորցրած ճանաչելու մասին վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածին և այդ չափերը սահմանող ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածին, ինչպես նաև վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը՝ փաստարկել է, որ նշված փոփոխություններով բարելավվել է իր վիճակը, հետևաբար դրանք ենթակա են կիրառման իր նկատմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն

ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:

ՀՀ սահմանադրական դատարանը՝ 2017 թվականի փետրվարի 17-ի ՍԴՈ-1348 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ **«...արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով»:**

Սույն գործի նյութերից հետևում է, որ Աննա Ղուկասյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ ապօրինի ձեռք է բերել ընդհանուր՝ 0.025 գրամ քաշով հոգեմետ նյութ պարունակող «Դիազեպամ» տեսակի 5 հատ դեղահաբ, ապա ձեռք բերած «Դիազեպամ» հոգեմետ դեղահաբերից 0.005 գրամ քաշով 1 հատ դեղահաբն ապօրինի իրացրել է Անիչկա Դարչինյանը, ով խմելու եղանակով օգտագործել է այն: Մնացած 0.02 գրամ քաշով 4 հատ հիշյալ դեղահաբերն Աննա Ղուկասյանն ապօրինի պահել է իր տան ննջարանում գտնվող զարդատուփի մեջ՝ հետագայում տատին խմեցնելու նպատակով, որոնք հայտնաբերվել և առգրավվել են ոստիկանության աշխատակիցների կողմից նրա բնակարանում կատարված խուզարկությամբ: Ինչպես ուժը կորցրած ճանաչված ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածի, այնպես էլ ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածի ուսումնասիրությունից երևում է, որ թմրամիջոցի չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները չեն հանգեցնում Աննա Ղուկասյանի վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված արարքի իրավական որակման փոփոխության:

Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշման շրջանակներում ակնհայտ է դառնում, որ վիճարկվող դրույթները չեն կիրառվել դիմողի նկատմամբ: Դիմողի կողմից առաջ քաշված սահմանադրաիրավական վեճն առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 5-րդ մասում կատարված փոփոխությունների արդյունքում ամրագրված իրավակարգավորումները հակասության մեջ են գտնվում ՀՀ կառավարության թիվ 707-Ն

որոշման 1-ի հավելվածի 16-րդ կետի և ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 44.1-րդ հոդվածի 3-րդ մասի հետ՝ առաջացնելով իրավական անորոշություն, կիրառելի չեն նրա նկատմամբ, քանի որ թմրամիջոցի չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների արդյունքում առաջացած ենթադրյալ իրավական անորոշությունը չի անդրադառնում դիմողի կողմից կատարված հանցանքի իրավական որակման բովանդակությանը:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա/ երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ/ երբ սպառվել են ներպետական պաշտպանության բոլոր միջոցները,

գ/ երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ հիմքի բացակայության դեպքում անհատական դիմում ներկա-

յացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Աննա Ղուկասյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

14 նոյեմբերի 2018 թվականի
ՍԴԴԿՈ-5